

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝  
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ  
(ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-1) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը՝

ա) ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին,  
բ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հաշվից դրամական միջոցների մուտքագրման, դուրս գրման, այդ թվում աշխատավարձի վճարման գործառույթները:

գ/ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:  
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝ առնվազն միջնակարգ կրթություն:

ա) պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

բ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

գ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցել ցանկացող՝ հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին)՝

ա) գրավոր դիմում (ծևը լրացվում է տեղում)։

բ) առնվազն միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթղթի (ատեստատի կամ դիպլոմի (միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունենալու դեպքում)) և աշխատանքային գրքույկի (առկայության դեպքում) պատճենները։

գ) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք։

դ) մեկ լուսանկար (3x4 սմ չափսի)։

ե) անձնագրի (փախստականի դեպքում՝ ՀՀ փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի) պատճենը:

Փաստաթղթերը ներկայացնել անձամբ:

Ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Փաստաթղթերը ներկայացնելու, պաշտոնի անձնագիրը, թեստավորման փուլի հարցաշարերը, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկի համայնքապետարան (հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ գյուղ Ֆերիկ, հեռ.՝ 093-147-222) կամ ՀՀ Արմավիրի մարզապետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչություն (հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ քաղաք Արմավիր Խ. Աբովյան 71, հեռ.՝ (0237) 2-07-70, (0237) 2-76-49 ամեն օր ժամը 09:00-ից մինչև 17:00-ն՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է՝ 2017 թվականի հունիսի 29-ը:

Մրցույթի սկիզբը՝ 2017 թվականի հուլիսի 14-ին, ժամը 12:00-ին՝ Ֆերիկի համայնքապետարանում: